ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի
ПРОТОКОЛ н.2

Заседания оценочной комиссии процедуры под кодом "EQ-EAJAPDZB-24/126

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 309 սենյակ ,
-օրը՝ 30.04.2024թ.-ժամը՝ 12:00

Մասնակցում էին	
Հանձնաժողովի նախագահ՝	Դ. Կարապետյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Զոհրաբյան, Մ. Սեթյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ի. Եղիազարյան
Участвовали	
Председатель комиссии:	Д. Карапетян
Члены комисии:	А. Зограбян, М. Сетян
Секретарь комисии:	И, Егиазарян

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 29.04.2024թ. հարցադրման և 30.04.2024թ. դրա վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին

/ Դ. Կարապետյան /

Հարցադրում՝

Հարգելի գործընկեր, խնդրում ենք տալ պարզաբանում տեխնիկական բնութագրի հետևյալ կետերի վերաբերյալ՝ 1. "Անկյունային շարժ (ուղղահայաց հարթությունում՝ հորիզոնական առանցքի շուրջ) ոչ պակաս, քան՝ ±200° (400°)" Անկյունային պտույտի ամբողջ դաշտը երկրաչափորեն կազմում է 360° (±180°): Ավելին՝ հաշվի առնելով դետեկտոչի լայնությունը C-աձև աղեղի դեպքում, 300° պտույտը ապահովում է դաշտի ծածկույթը ամբողջ հնարավոր անկյունագծերով: Դրանից ավել պահանջը անտրամաբանական է, անհիմն, և ողջամիտ կասկած է հարուցում, որ տեխնիկական բնութագիրը գրված է կոնկրետ արտադրողի մոդելի համար: Հակառակ դեպքում խնդրում ենք պարզաբանել, թե ո՞ր վիրահատությաունների, միջամտությունների կամ դեպքերի համար կարող է պահանջվել 400° պտույտ: 2. "Բարձր լուծելիության տեսախցիկ, առնվազն 1000x1000 պիքսել Թողունակությունը ոչ պակաս, քան 50 ՄՀց Ազդանշան-աղմուկ հարաբերակցությունը ոչ պակաս, քան՝ 58 Դբ" Խնդրում ենք պարզաբանել ի՞նչ նպատակով է C-աձև աղեղի վրա օգտագործվելու տեսախցիկ, որտե՞ղ է այն տեղադրված լինելու, և ո՞ր, կամ ի՞նչ մոնիտորի վրա պետք է արտացոլի պատկերը: 3."Սարքավորումը պետք է լինի ԱՄՆ-ի, կամ Եվրոպական կամ Ճապոնական արտադրության, իսկ նշված երկրներից բացի այլ երկրի արտադրության դեպքում՝ մատակարարի կողմից պետք է պարտադիր ներկայացվի ՀՀ-ում առնվազն 3 խոշոր՝ 250 և ավել մահճակալային ֆոնդ ունեցող, 24-ժամյա ծանրաբեռնված ռեժիմով աշխատող բժշկական կենտրոնների կողմից 2 տարվա օգտագործումից բխող դրական եզրակացություն" Այս պահանջը ուղիղ կերպով խախտում է Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» Օրենքի 13–րդ հոդվածի 5-րդ կետը, որտեղ ասվում է՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»

Պարզաբանում՝

Հարգելի գործընկեր 1. Նշված պարամետրի Ձեր մեկնաբանությունը ճշգրիտ չէ: Անկյունային շարժը ուղղահայաց հարթությունում հորիզոնական առանցքի նկատմամբ պետք է լինի +/-200°, ինչը նշանակում է, որ, պայմանականորեն վիրաբուժական սեղանի (հորիզոնական առանցք) նկատմամբ ուղղահայաց շարժը պիտի լինի 200° դեպի աջ և նույնքան դեպի ձախ: Այսինքն, այստեղ խոսքը ոչ թե շտատիվի պտույտի մասին է, ինչի պարագայում ամբողջական պտույտն իրոք 360°-ից ավել չի կարող լինել, այլ շտատիվի՝ երկու ուղղությամբ պտույտների մասին է: Սրանից բացի, խնդրում եմ ուշադրություն դարձնել, որ տեխնիկական բնութագրով պահանջվում է ոչ թե հարթ-պանելային դետեկտորով սարք, այլ պատկերի ուժեղացուցիչով, հետևաբար դետեկտորի լայնությունն ու դրա հետևանքով պտույտների անկյունային սահմանափակումները կիրառելի չեն: 2.Տեխնիկական բնութագրով պահանջվում է ոչ թե հարթ-պանելային դետեկտորով սարք, այլ պատկերի

հաժեղացուցիչով սարք, ինչի դեպքում պատկերի ձևավորումը տեղի է ունենում տեսախցիկի միջոցով և պատկերն արտացոլվելու է սարքի հիմնական մոնիտորների վրա: 3. Տվյալ ձևակերպումն իրենից չի ներկայացնում պահանջ կամ հղում որևէ կոնտրետ երկրի, այլ ելնելով ունեցած փորձից լրացուցիչ երաշխիք է ստեղծում որակյալ և դիմացկուն սարքավորում ձեռք բերելու համար, չի բացառում որևէ երկրի արտադրանքի ներկայացում՝ հետևաբար չի կարող կիրառվել «կամ համարժեք» բառերը կամ դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի խախտում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии:		Դ. Կարապետյան	Д. Карапетян
Անդամներ՝ Члены комисии:		Ա. Զոհրաբյան	А. Зограбян
		Մ. Սեթյան	М. Сетян
Համակարգող՝ Секретарь комисии:		Ի. Եղիազարյան	И. Егиазарян